

Այլազգիների և այլազաւանների հարցերը  
Խուսասանի արմատական բնակչութեան շահերի  
տեսակէտից<sup>1)</sup>.

Մարդկային յառաջադիմութիւնը հասարակական որոշ  
ճշմարտութիւններ է մշակել որոնք կարծես թէ ամբողջ  
լուսաւոր աշխարհի գաւանութիւնն են կազմում, մտել են  
նորա մարմնոյ և արեան մէջ։ Եւ այդպիսի ճշմարտութիւններին, լուսաւորութեան այդ պատուիրաններին է պատ-  
կանում այն համողմունքը, որ իւրաքանչիւր տէրութեան  
մէջ տիրապետող ազգութեանը կամ՝ տիրապետող հաւատոյ  
դաւանութեանը չպատկանելու պատճառով որ և է իրա-  
ւունքից ոչ ոք չպէտք է զբկուի։ Այն շրջանը, որ այլազ-  
գիններին և այլազաւաններին է հարածել, բոլոր առաջնա-  
կարգ երկիրներն էլ անցել են, բայց նոյն չափով էլ բոլորը  
միացած խոստովանել են, որ նման քաղաքականութիւնը  
կորուտաբեր է և անհարդար։ Եւ ինչո՞ւ համար ուռանները  
պէտք է միջնադարեան աւանդութիւններին հաւատարիմ  
մնան՝ մարդասիրութեան տարրական պահանջների գո-  
հացմանը հակառակ գործելով։ Առ այս կաւելացնենք և  
այն, որ աշխարհում չկայ մի տէրութիւն, որը իւր շա-  
հերի համար համբերատարութեան սկզբունքի գործադրու-  
թեանը աւելի կարիք զգար, քան Ռուսաստանը։ Տարած-  
ուելով աշխարհի երկու մասի վերայ և բաղկացած լինելով  
բազմաթիւ ազգութիւններից՝ նա կազմակերպուելով կա-  
րող է մի ամբողջութիւն դառնալ և ազգերի շարունակ  
աճող մաքառման մէջ իւր քաղաքական շահերը յաջողու-  
թեամբ պաշտպանել միայն այն կարևոր պայմանով, եթէ  
նորա կազմութեան մէջ մտած իւրաքանչիւր ազգութիւն,  
ինչպէս և իւրաքանչիւր հաւատոյ դաւանութիւն պետու-  
թեան կողմից միւնոյն հովանաւորութիւնը կդանեն։

1) „Նովոտի“ №№ 19 և 22. 1905 թ. յօդ. Վ. Էլիկոսի:

Սակայն այլազգիների կողմից դէպի հայրենիքը կարող է անկեղծ, մերձաւոր կապ, անսահման նույնաբերութիւն, հայրենիքի գաղափարականացում լինել, երբ օրէնքը, այդ հայրենիքը նոցա համար չի ճանաչում, երբ օրէնքը նոցա համարում է օտարերկրացիներ։ Այն ժամանակ երբ ուշրիշտերութիւնների մէջ մի երկուում մի քանի տարիների ընթացքում ապրելով մէկը հայրենիք և սորա շնորհած արտօնութիւնները ձեռք բերելու իրաւունք է ստանում, Ռուսաստանի մէջ ապրող ազգութիւնները, որոնք բնակւում էին այստեղ գեռ այն ժամանակ, երբ սա գեռ ևս հեթանոսական երկիր էր, (օրինակ Հրէաները) գեռ շարունակում են օտարերկրացիներ համարուել,

Ռուսաստանի այլազգիները կեանքի և գործնէութեան ամեն մի քայլափախում կրում են իրաւազուրկ գրութեան բոլոր տառապանքները, նոցա երեխաներին դպրոց չեն ընդունում։ իսկ իրենց էլ պետական ծառայութեան մէջ՝ Ցեղական ինքնավարութեան մէջ նոցա ունեցած մասնակցութիւնը առանձնապես ստեղծուած մի շարք սահմանափակումների հետ է կապուած։ Նոցա համար երկիրը բաժանուած է բազմաթիւ միջնապատերով, որոնց վերայի յոյտարարութիւնները առում են թէ ուր կարելի է երթալ և ուր չի կարելի։ Դատարանով դատապարտուած յանցագործների նման՝ նոքա շատ տեղերում զրկուած են անշարժ կայք ձեռք բերելու կամ անշարժ կայքը ցեղակեցներին վաճառելու իրաւունքից, Պակաս զդալի չեն բազմագիմի սահմանափակումները և կրօնական շրջանում։ մերթ արգելում են նոր եկեղեցիներ կառուցանել, մերթ պահանջում են, որ եկեղեցիները իրենց արտաքին տեսքով մարդաբնակ տների նմանութիւն բերեն, իսկ աղանդաւորները, մինչեւ անգամ, ազօթելու համար չեն կարող ժողովներ կազմել։ Զեն թոյլատրում, որ հերձուածողները դպրոց և հոգեւորականութիւն ունենան։ Բնակչութեան մեծամեծ խմբեր, որոնք միայն անուանապես են պատկանում ուղղափառութեան, օրինակ, նախկին ունիատները, էստերը և լատիները և որոնք վերստին

ընդունել են լուսերականութիւն և այլն, ըստ օրինի պարտաւոր են դիմել ուղղափառ հոգեսորականութեան ծառայութեանը։ Այս քիչ է, վաթսունական թուականների բարենորոգութիւնից շատերի բարիքից զրկում է ամբողջ արևմտեան Ռուսաստանը միայն նորա համար, որ նա այլադաւան է և այլազդի։ Այլադաւանները և այլազդիները ժայր երկրում հոգանաւորութիւն աւելի քիչ են վայելում, քան օտար երկիրներում, ուր նոցա գործներութեան և տեղափոխութեան կատարեալ ազատութիւնը, և, ընդհանրապէս այն բոլոր իրաւունքներն են ապահովուած, որոնք տմեն մի օտարերկրացի իրեն է վերապահում։

Եթէ պատերազմի ժամանակ Մոսկուայի վաճառականական դատակարդի արտայայտած թոյլ ազգասիրութիւնը «ԽօՏ, Վրեմյ»-ի էջերում նորանով է բացատրում, որ վաճառականը ինք զինքն հայրենիքի քաղաքացի չի ճանաչում և, որ նա յամենայն դէպս լիազօր իրաւասութիւն ունեցող քաղաքացի չէ, հասկա ինչպէս պէտք է զգան իրենց այլազդիները և այլադաւանները, որոնք միայն համարձակուել են երազել քաղաքացիական այն դրութիւնը, որից օգտում է ուստի վաճառականական դասը։

Որտեղ է այն հողը, որը բոլոր հալատակներին ի մի կազմակերպեալ ամբողջութիւն դարձնէր. ինչով պէտք է ողջագուրուի քնքոյշ սէր առ հայրենիք, կեանքի գնով մայր երկիրը թշնամու ամեն մի յարձակումից պաշտպանելու խթանները որտեղ պէտք է գտնել։ Երբէք բանտարկեալի համար բանտը ծիսապաշտական առարկոյ չի եղել՝ ինչպէս այժմ. ևս առաւել նոցա համար, որոնք այլազդիներից կամ այլադաւաններից ծնուելով յանցանք են դործել։

Ռուսաց կայսերութեան տարրական քաղաքական հաշվու պահանջում է, որ նա այլազդի և այլադաւան բնակչութեան համար այդ անուանական հայրենիքը՝ իրական դարձնէ։ Այս խնդիրը առանձնապէս կարեոր է այն այլազդիների վերաբերմաք, որոնք ուստական արևմտեան

սահմանի երկարութեամբ են բնակւում։

Այլազգիների և այլազաւանների լիազօր իրաւունքների այս անհաւասարութիւնը (համեմատած ուսւ բնակչութեան հետ) Ռուսաստանի համար և ուրիշ շատ բացասական հետևանքներ է առաջ բերում։

Իւր յարատեռութեան և քաղաքական զօրութեան համար ոչ մի խելացի պետութիւն օգտաւէտ չի համարել, որ ինքը բանւոր դաստիարակի լայնածաւալ օջախներ ունենայ. այն ինչ ամբողջ արևմտեան Ռուսաստանի քաղաքաբները և դաստակերտները այդպիսի օջախներով զեռում են շնորհիւ այն բանի, որ հրէական բազմութիւնը արհեստական կերպով այդ տեղերին է կպցրած։

Իսկապէս, ինչպիսի այլազգիների հետ են կռւում ռուսները. Աւելի լուսաւորուած և նախաձեռնող այլազգիների հետ. Կալմիկի, կիւտիզի, օսետինի, ցիդանի առաջ իւրեանց հայրենիքի գոները լայն և հիւրասիրաբար են բաց անում՝ ռուսները և թողնում, որ սոքա հպատակութեան ընդհանուր բարիքներից օգտուեն։ Վայրենի, կամքից զուրկ այլազգին ռուսական ուժի գեօրա է, նա սիրելի է. իսկ նոյն այդ այլազգիներ—լեհացիներ, հրէաներ, ինչպէս և ազանդաւորներ և հերձուածողներ, որոնք կենսառուակաւթեան տէր են և ինչպէս յայտնի է, անազարտ իրաւունքներ և բարեկեցութիւն վայելող ընդհանրութիւնից խիստ կերպով են զատուած, շրջապատում են անվատահութեամբ և զրկում տարրական իրաւունքներից։

Բոլոր միջոցներն են գործադրում, որպէս զի նոքակարենը ազգեցութիւն ձեռք չըերեն ընդհանրապէս Ռուսաստանում՝ և մասնաւորապէս վարչական մեքենական կազմի մէջ։

Այլազգի միջավայրում ռուս տարրերի շահերը տիւրապետող անելու համար ամեն ինչ արուած է. իսկ որպէս զի այլազգիները բուն Ռուսաստան և կառավարչական վայրերը չժամփանցեն՝ շղթայ և ցանկապատ են քաշուած, որոնք թոյլատրելի են մի միայն վայրենութիւնից դուրս չեկող երկրի մէջ։

Կարճ ասած, արմատական բնակչութեան նկատմամբ յամառօրէն առաջ է տարւում հովանաւորութեան այն սկզբունքը, որը տնտեսական յարաբերութիւնների համար է տիրապետում։ Այլաղգիների և այլաղաւանների յարշակմունքից այդ սկզբունքը ուուները արհեստական այն պիսի միջոցներով են պաշտպանում, ինչպէս արտասահմանի ասլրանքների մեծ ներածութիւնից արդիւնաբերութիւնն է պահպանում։ Սակայն այսուղ էլ այդ հովանաւորութեան վնասը աւելի երեաց քան արդիւնաբերական յաջողութիւնների ապահովութեան մէջ։

Մրցումից, թարմ և աւելի կուլտուրական ոյժերի հոսանքից պաշտպանուելով և երկրագործութեան, արդիւնաբերութեան և վաճառականութեան հնացած ձեւերը ձեռքից բաց շթողնելով, իւր բազմադարեան քնից բուն Ռուսաստանը դանդաղօրէն էր զարթնում։ Համապատասխան հետեանքներ ստացուեցին և բիւրօկրատիայի շրջանում։ Նոյն այդ ժամանակ արևմտեան Ռուսաստանը պատերազմի, վարչական ծառայութեան և ազատ արհեստների համար ըստ անհրաժեշտութեան քիչ ոյժ վատնելով, իւր ամբողջ ռւշագրութիւնը կենդրուացրեց տնտեսական գործունէութեան վերայ և հասաւ խոշոր հետեանքների։

Երբ կենդրոնը թեք հարթութիւնից անդիմադրելի կերպով գլորւում էր և քարուքանդ լինում՝ այն ժամանակ Պրիվիալինակու, հիւսիս-արևմտեան և մասամբ էլ հարաւ-արևմտեան նահանգները իրենց արդիւնաբերական ոյժերն էին յամառօրէն զարգացնում և հպարտութեամբ կարող են առել, որ նոցա մօտիկ անցեալի և ներկայ տնտեսական վիճակները մեծ տարածութեամբ են բաժանեւում։ Այս նկատողութիւնը, ի հարկէ, չի վերաբերում հրէայ քնակչութեան ստորին և մասամբ էլ միջին խաւերին, որոնք, ինչպէս վերեւում ասուեց, ազատօրէն չկարողանալով քնակութեան տեղ ընտրել շատ բան էին կորցնում։ Իսկ լեհացիների տնտեսական յաջողութիւնները, ինչպէս գիւղատնտեսութեան, այնպէս էլ արդիւնաբերութեան մէջ,

**ԱԵՃ** մասամբ, յակամայս մասնագիտութիւն դարձած տնտեսական պարապմանքների հետևանքներ են:

Այլազգիների և այլագաւանների իրաւունքների անհաւասարութիւնը տանում է հեռու, դեպի սոսկալի բարոյական ապականութիւն խչպէս նոցա, այնպէս էլ արմատական բնակչութեանը: Ոչ ոքի համար դաղտնիք չէ, որ այդ հողի մէջ է իւր արմատները խորացրել կաշառքը, որ հազարաւոր վայրերում կազմակերպուած բնաւորութիւն է ընդունել: Եւ չկան այն միջոցները, որոնցով կարելի լինէր այդ չարութիւնը վերջացնել և կամ գոնէ թուլացնել: Այս քիչ է, նա, ով այլազգիների խաթեր համար օրէնքի առեւտուր է անում, ուրիշ շատ դեպքերում ևս օրէնքի նկատմամբ նման դանցառութեան առաջ կանգ չի առնի: Համարեա ընդ միշտ անպատճիժ մնացած միլիոնաւոր ոճրագործութիւններ իրենց ծագումով չնորհապարտ են այն հանգամանքին, որ վերոյիշեալ մասում մեր օրէնսդրութիւնը անկատար է:

Արտեղ է հրէական աւերումների պատճառը, որոնք ուսւ ժողովրդի տիեզերական բարոյական հեղինակութեան շատ խուար բծերից մէկն են կազմում և որոնք վարժեցնում են ուսւին չյարգել մարդուն և օտարի սեպհականութիւն, եթէ ոչ այլազգիների այն ստոր կացութեան մէջ, ուր սոքա հէնց օրէնսդրութեան միջոցով են դրուած: Մեծամասնութեան քաղաքացիական դրութիւնից օգտուելու հնարաւորութիւն ունենալու համար ինչքան բազմաթիւ հպատակներ խեղդել են խղճի ձայնը և կրօնափոխ եղել:

Այլազգիների լաւ, առաւելապէս ամենաձեռնհաստարերին՝ ճնշումը ուսւական սահմանից դուրս է քշում, առանձնապէս Ամերիկա: Այլազգիների և այլագաւանների իրաւունքների բազմաթիւ սահմանափակումները ի կատար ածելու համար եղած վերահսկողութիւնը, ուսւական ոստիկանական-վարչական և ներքին գործոց նախարարութեան կենդրոնական բերան լրագիրների և մասամբ էլ դատաստանական հաստատութիւնների հոգսերի շրջանը,

մեծ չափով ընդլայնում է և խոշոր ծախքերով դանձարանի վերադ ծանրանում։

Եթէ հրէաները շահագործող են և անդուժ, և այն ժամանակ ի՞նչ իրաւունք ունեն ուստաները պյտ «անյագ ժողովրդին» զոհելու ռուս բնակչութեան, յատկապէս, այն մասը, որը հրէաների բնակութեան համար գծուած սահսահմաններումն է ապրում։ Արդեօք արգարացի չէլ լինի, եթէ «հրէական լուծը» երկրի բոլոր մասերի մէջ հաւասար չափով բաժանուէր։

Ինչքան էլ այս շարունակելի նկատողութիւնը անսպասելի երևայ, բայց և առանձին ուժով պէտք է այդ ընդուժել։ Եթէ ուստական ներքին կեանքի արմատական վերանորոգութիւնները դանդաղել են և մեծ չափով էլ դանդաղում են՝ դա յատկապէս այլազգիների առանձին դրութեան հետեանք է։ Լուրջ երկիւղ կայ, որ եթէ բիւրուատիայի կառավարութիւնը մէջտեղից վերանայ՝ այլազգիների կողմից կենդրոնախոյս ձգտումներ կստկզուին և այդպիսով Ռուսաստանի տմբողջութեան համար վտանգ տուած կգայ։ Սակայն պարզ չէ, որ այս վտանգը առաջ բերող բոլոր ապացոյցների և տրամադրութիւնների համար իրակ սկզբնակէտ է ծառայում։ Հէնց այլազգիների իրաւական ստորացումը։

Մի րոպէ համաձայնները ազգայնականների հետ, որ լեհացիք, հրէաները, վինլանդացիք տէրութեան համար ցանկալի տարրեր չեն, բայց և այնպէս պէտք է խօստովանները, որ այլազգիների հարցը վճռելու համար ընտրուած ճանապարհը ճշմարիտ չէ։ Հէնց Ռուսաստանի արտաքին յարաբերութիւնների մէջ լինելիք բարդութիւնները կանչխօրոք խափանելու համար ձեռք առնուած խիստ միջոցների հաւաքածուն, որոնցից դէնիք մեր ժամանակում երթալ չէր կարելի, ինչպէս երևաց, գործնական ոչ մի հետեանք շտուեցին այն ըմբռնմամբ թէ այլազգիների և այլալպաւանների և արմատական բնակչութեան մէջ մի կազմակերպուած ձուլում կլինի։ Իսկ միւնոյն ժամանակ թոյլ միջոցները, որոնք ըստ երևոյթին ձեռք առնելու

պատրաստ են, իբրև թէ ոռւսացնելու և այլ հպատակների շահերը պաշտպանելու համար, ըստ էռութեան չեն կարող լուրջ ազգեցութիւն ունենալ, ոոքա կլինեն անպէտք, բայց ընդ սմին բնակչութիւնը անդադար երկու թշնամի բանակների բաժանող միջոցներ։ Յօդուած այս վերջին նախադրութեան կայ և մի ուրիշ ենթադրութիւնները էլ լինի, թէկուզ 500—1000 տարուց չետոյ, բայց և այնպէս հարկաւոր է, որ այլազգիների և այլադաւանների հարցերը արմատապէս—իւրեանց ամբողջ բովանդակութեամբ վճռուին, ի հարկէ միլիոնաւոր բնակիչներին անտրդարութեան մէջ պահպանելով՝ այս հարցերը չեն լուծուին Այլազգիներին և այլադաւաններին գուրս քշելու մասին էլ չի կարելի մտածել։ Խակ այդպիսի դեպքում չաւ չ՞ր լինի, որ երկար ժամանակ չյետաձգուէր այն՝ ինչ որ այժմ կարելի է վերջացնել։ Ինչու հոմար են Ռուսաստանի բնակչութեան առանձին տարրերը գարեր չարունակ կը ուում, տանջւում և փախադարձաբար ուժասպառ լինում։

Անաշառութիւնը թոյլ է տալիս ասելու, որ այլազգիների և այլադաւանների հարցերը բացառապէս ճնշող միջոցների չնորհիւ են ծագել։ Ֆինլանդիայի կապը Ռուսաստանի հետ երբ էր սրտանց և ամուր, ֆինլանդիան ռուսացնելու փորձ անելուց առաջ, թէ սկսած այդ րոպէից, հարկաւ իրերի նախկին դրութեան ժամանակը ֆինլանդիայի նկատմամբ ռուս քաղաքականութեան մէջ առաջ եկած վերջին փոփոխութիւնը արդեօք չի ապացուցանում այն դիտակցութիւնը, որ խաղաղութեան աւելի շուտ կարելի է հասնել մի միայն յարգելով այդ երկրի կենցաղական և իրաւաբանական առանձնայատկութիւնները, քան թէ հակառակ գործողութիւններով։ Յիշեցէր, թէ սորանից 9 տարի առաջ լեհացիների նկատմամբ ցոյց տրուած վստահութեան առաջին նշանները որպիսի ոգեւորութիւն առաջ բերին նոցա մէջ։ Ի՞նչպէս բացատրել Ռուսաստանի և Վրաստանի ձուլման խնդիրը, որ այնպէս առանձին յաջողութեամբ լուծում ստացաւ, եթէ ոչ նորանով, որ Ռուսաստանը այդ երկրի բնակչութեանը չնոր-

հեց լիակատար իրաւունքներ և ուշադրութիւն՝ որից նա օգտառմ էր Ե՞րբ առաջ եկաւ հայկական հարցը, եթէ ոչ սկսած այն ժամանակուանից, երբ զօրեղ կերպով նոցաներքին կեանքի մէջ խառնուեցան։ Թէև մալուսները մայրենի լեզուով գրքեր հրատարակելու և դաստաններու իրաւունք չունեն, բայց ի նկատի առնելով, որ նոքա մնացած իրաւունքներով հաւասար են վելիկուսներին, ուստի այդ երկու սահմանափակումներով էլ մալուսնական հարցը վերջանում է։

Հպատակների մեծամասնութեան հետ իրաւութանական միենոյն պայմանների մէջ ապրող այլազգինների և այլադաւանների համար ոչ այլազգինների հարց գոյութիւն ունի և ոչ էլ այլադաւանների, սակայն արժէ միայն լիակատար իրաւունքներ վայելող այս կամ այն այլազգինների կամ այլադաւանների գէմ հալածանք առաջ բերել, այն ժամանակ կերպնուէին այն բոլորը, ինչ որ այսօր տեսնում ենք արևմտեան Ռուսաստանի սահմաններում։

Երբեք լաւ ապացոյց այն բանի, որ վերոյիշեալ մասում ճնշող միջոցները ոչ միայն ի զուր են անցնում, այլ և տալիս են հակառակ հետեանքներ, որոնք նոցանից անսպասելի են, ծառայում է հերձուածի հետ եղած կռուի պատմութիւնը։ Առաջնորդ եպիսկոպոսների վաւերացնող բազմաթիւ թղթերի և աւագ դատախազի վկայութեան համաձայն 1883 թուի մայիսի 3-ի օրէնքը Ռուսաստանի հերձուածողների դրութիւնը որոշ չափով մեզմացնելով՝ հնածէս հերձուածը թուլացրեց և մինչև իսկ նորա կազմալու ժմանը նպաստեց «Հոգեորականութեան ուսուցչական և քարոզչական գործնէութիւնը, գրել է իւր հաշիւններից մէկում աւագ դատախազը, այն չափով է անում, ինչ չափով որ հերձուածը հալածող քաղացիական իշխանութիւնների նախկին բացառիկ գործնէութիւնը թուլանում է»։

Կրկնում ենք. բացի այն վճիռը, որի վերայ առնուազն 35 լուսաւորուած երկիրներ կանգ են առել, Ռուսաստանը այլազգինների և այլադաւանների հարցերը

վճռելու համար ուրիշը չի գտնի:

Մենք բոլորովին աչքաթող չենք անում այն, որ հրէան ընակութեան սահմանից դուրս, կեանքի ասպարիզում թերեւս աւելի զօրեղ մրցակից լինի՝ քան թէ ուռս գիւղացին և նոյն իսկ վաճառականը, բայց ինչու համար այլազգիների յաջողութեանը գիմագրելու համար գիմել ուրիշ միջոցների, երբ կայ ամեն ժամանակ և ամենայն տեղ գործադրուած միջոցը, այն է զօրեղացնել ուռս ընակչութեան մրցելու ընդունակութիւնները: Զինուօրեւցէք ուռս ընակչութեանը գիտութիւններով, առէք նորա վերայից դարեր շարունակ քնացնող խնամակալութիւնը, տուեք նորան շարժողութեան և ասպարէզներ ընտրելու ազատութիւն, հնարաւորութիւն տուեք, որ նա ազատութէն ամեն տեսակի ընկերութիւններ կազմակերպի: և այն ժամանակ հրէայի սպառնացած վաճառականական վրա տանգը ինքնըստինքեան կանհետանայ: Տեսէք, ինչպիսի յաջողութեամբ չեխերը իրենց ազգայնական շահերը պաշտպանում են դարեր շարունակ ճորտացնող գերմանացուց սորան հէնց Զեխաստանում վունդելով և վաճառականութիւնից և արդիւնաբերութիւնից և հասարակական և պետական հաստատութիւններից: Թող այդպիսի միջոցը ուվաները պաշտպանեն գիւղը արտաքին շահագործութիւնից, մտնաւանդ որ քանակական գերակշռութիւնը նոցա կողմն է: Տնտեսական շարիքի դէմ, եթէ նա դեռ գոյութիւն ունի, պէտք է անտեսական միջոցներով էլ կռուել. իսկ քաղաքացիական և կրօնական մասի համար էլ թող ազդ առնուի ազատութեան և հաւասարութեան միակ ճշմարիտ սկզբունքը և ոտք դրուի միտթեան ճանապարհի վերայ:

Այդմ, երբ ուռսական ներքին կեանքի բոլոր ախտերը քացուել են և երբ մեր անզօրութիւնը իւր ամբողջ մերկութեամբ մեր դէմն է կանգ առել, իսկ երկրի ծայրերումն էլ քաղաքական խոշոր բարդութիւնները պարզօրէն առաջներս են պատկերանում, ներքին երկալառակութիւններով զբաղուելու հէջ ժամանակը չէ, որոնք


թուլացնում են և ապականում և՝ արտօնեալ ընակցութիւնը և այն մասը, որ շատ անտանելի է համարւում:

Հարցը կիսատ-պռատ վճռելու մասին էլ չի կարող այստեղ խօսք լինել:

Հարկաւոր է գորդեան հանդոյցը միանգամից և զերջանականապէս կտրել: Ուուսական կառավարութեան եղանակի մէջ ոչինչ բան չուետք է մնայ, որը այլազգիներին և այլադաւաններին յիշեցնել կարողանար, թէ պետութիւնը նոցա նկատմամբ անհաւասար վերաբերմունք է ցոյց տուել: Պետութեան առաջ բոլոր հպատակների տրնտեսական և անձնական պարտականութեանց նոյնութիւնը տրհրաժեշտութիւն է առաջ բերում, որ նա իրաւունքների հաւասարութիւն էլ ունենան:

Հարունակելով այլազգիների և այլադաւանների իրաւունքների սահմանութիւնումը պահպանել՝ Ուուսաստանը իրեւ հաւասար իրաւունքներ ունեցող անդամ, երբէք չի մտնի քաղաքակիրթ ժողովուրդների ընտանիքի մէջ:

Թարգմ. Անոն Վարդ.



## ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. Մամիկոնեանց նշանակութիւնը եւ պատմութեան աղբիւրները.

### Յ ա ւ ե լ ո ւ ա ծ

Մենք ցոյց տուինք\* թէ ինչպէս ժամանակակից պատմական անցքերն ու անձերը, յատկապէս Մամիկոնեանցը՝ անդրադարձել են մեր ազգային ժողովրդական դիւցազներգութեան մէջ: Մեր զբաղմանց ընթացքում հետզհետէ

\* Արարատ 1906. ապրիլ, էջ 334—342: